

**«Իրավաբանական անձանց պետական գրանցման,
իրավաբանական անձանց առանձնացված
ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ
ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Զ Ը

**«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ԱՌԱՆՁՆԱԳՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման,
իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների,
հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին»
Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի
12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ կետով.

«6.1. վարում է վիճակագրություն և եռամսյակային պարբերականությամբ
հրապարակում է տեղեկություններ ընկերությունների գրանցումների, այդ
թվում՝ էլեկտրոնային եղանակով իրականացված գրանցումների վերաբերյալ.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից: